# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 մարտի 2024 թվականի N 193-Ա

## ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետը և «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի Անդրանիկի 10/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու համար «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին տալ թույլտվություն՝ 2024 թվականի հունվար-հունիս ամիսների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 01
ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183 yeghegnadzor@gmail.com

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

***04 մարտի 2024 թվականի N 194-Ա***

*ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և համասեփականատեր Նարինե Շմավոնյանի դիմումը.

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Կամո Աղվանի Հովհաննիսյանին,Նարինե Ժորայի Շմավոնյանին,Աղվան Կամոյի Հովհաննիսյանին,Սերգեյ Կամոյի Հովհաննիսյանին,Ժորա Կամոյի Հովհաննիսյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և բնակելի կառուցապատման հողին (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28022024-10-0024 վկայական) տրամադրել հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք,գյուղ Գետափ, Եղեգնաձորի խճուղի, 2-րդ փակուղի, 1 բնակելի տուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

2024 թ. մարտի 04
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**06 մարտի 2024 թվականի N 195-Ա**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Երևանյան խճուղի 5/24 առևտրի սրահ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 21.24 քմ մակերեսով առևտրի սրահը և 0.00268 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Դավիթ Ժորայի Սարգսյանին շինության համար՝ 475 460 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 119 050 (մեկ հարյուր տասնիննը հազար ութսուն) ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր՝ 594 510 (հինգ հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**06 մարտի 2024 թվականի N 196-Ա**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Ա. Միկոյան փողոց 22/8 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 17 քմ մակերեսով ավտոտնակը և 0.00196 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Մարինե Մամիկոնի Բաբայանին շինության համար՝ 38 600 (երեսունութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 87 100 (ութսունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր՝ 125 700 (մեկ հարյուր քսանհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 06
ք. Եղեգնաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**06 մարտի 2024 թվականի N 197-Ա**

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշման պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, 10-001-0343-0026 կադաստրային ծածկագրով, 0.4 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 06
ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ**
**ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**06 մարտի 2024 թվականի N 198-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, հաշվի առնելով, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի, Մոմիկի փողոց թիվ 8/4 հողամաս հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (ավտոտնակ) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, և հիմք ընդունելով Գագիկ Ներսիսյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ՝ 218/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի Մոմիկի փողոց թիվ 8/4 հողամաս հասցեում գտնվող, Գագիկ Ռազմիկի Ներսիսյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 02042019-10-0002) հողատարածքում ինքնակամ կառուցված՝ 14.51 քմ ներքին մակերեսով և 18 քմ արտաքին մակերեսով շինությունը (ավտոտնակ) համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023N9ZUUP):

2․ Առաջարկել կառույցն իրականացրած Գագիկ Ռազմիկի Ներսիսյանին (ծնված՝ 22.09.1960թ.) 1քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 1969 (մեկ հազար ինը հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ, ընդամենը 35 450 (երեսունհինգ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3․ Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4․ Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5․ Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 06
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**06 մարտի 2024 թվականի N 199-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի, Մոմիկի փողոց, 8/5 ավտոտնակ հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (ավտոտնակ) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշումների պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը և Գագիկ Ներսիսյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ՝ 219/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի, Մոմիկի փողոց, 8/5 ավտոտնակ հասցեում գտնվող ըստ չափագրման հատակագծի 7.84 քմ ներքին մակերեսով և 9 քմ արտաքին մակերեսով կառուցված ինքնակամ կառույցը (ավտոտնակ) և դրա սպասարկման համար առանձնացված 0.00089 հա մակերեսով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման հողատարածքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023KWHQLP) համարել Եղեգնաձոր համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական: Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր ք., Մոմիկի փողոց, 8/5 ավտոտնակ:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ կատարել կառույցն իրականացրած Գագիկ Ռազմիկի Ներսիսյանին (ծնված՝ 22.09.1960թ.): Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օրինականացման համար սահմանված չափով և կարգով գումարների վճարումից և այդ փաստը հավաստող գրավոր ապացույցը (վճարման անդորրագիր, տեղեկանք և կամ քաղվածք) ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում Եղեգնաձորի համայնքապետարանի անունից Գնորդի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 06
ք. Եղեգնաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**07 մարտի 2024 թվականի N 200-Ա**

## ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի ղեկավարի կողմից օրինական ճանաչված համայնք Եղեգնաձոր Եղեգնաձոր ք., Զորավար Անդրանիկի փողոց 19/9 ավտոտնակ հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 43.94 քմ մակերեսով ավտոտնակը և 0.00227 հա մակերեսով հողատարածքն ուղղակի վաճառքով վաճառել Ժուլետա Բոգդանի Խաչատրյանին շինության համար՝ 89 500 (ութսունինը հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և հողատարածքի համար՝ 100 830 (մեկ հարյուր հազար ութ հարյուր երեսուն) ՀՀ դրամ արժեքով, ընդհանուր՝ 190 330 (մեկ հարյուր իննսուն հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամ:

2. Քաղաքացու հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 07
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**07 մարտի 2024 թվականի N 201-Ա**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 52-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 185-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 30-ի՝ «Անշարժ գույքերը միավորելու, հասցե տրամադրելու և հասարակական նշանակության շինության երկրորդ հարկի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» թիվ 52-Ա որոշման հիմնական մասի երկրորդ կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ.
«2. Սույն որոշման առաջին կետով միավորած, Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր քաղաքի Կամոյի փողոց, 95 առևտրի սրահ հասցեում գտնվող հասարակական նշանակության շինության (առևտրի սրահ) երկրորդ հարկի (63.4 քմ) գործառնական նշանակությունը փոփոխել՝ դարձնելով բնակելի՝ (բնակելի տուն) առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և շինարարության թույլտվության:»:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 29-ի՝ «Համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 30-ի թիվ 52-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 185-Ա որոշումը:

3. Որոշումն ուժի մեջ է իրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 07
ք. Եղեգնաձոր

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի Պ. Սևակի փողոց 2/25 առևտրի սրահ հասցեում գտնվող, Արմեն Ռաֆիկի Համբարձումյանի կողմից բազմաբնակարան բնակելի շենքի օտարման գոտում ինքնակամ կառուցված՝ 19.17 քմ ներքին մակերեսով և 23.58 քմ արտաքին մակերեսով շինությունը (առևտրի սրահ, բաց պատշգամբ) համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023UDPCSM): Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր ք., Պ. Սևակի փողոց, 2/25 առևտրի սրահ:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Արմեն Ռաֆիկի Համբարձումյանին (ծնված՝ 01.10.1973թ.) 1քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, ընդամենը 92 860 (իննսուներկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3 . Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 07
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**07 մարտի 2024 թվականի N 202-Ա**

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի, Պ. Սևակի փողոց 2/25 առևտրի սրահ հասցեում կառուցված ինքնակամ կառույցի (առևտրի սրահ, բաց պատշգամբ) պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված՝ սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ, 31-րդ կետերի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն, 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1730-Ն որոշումների պահանջներով, և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշման 2-րդ հավելվածի 19-րդ կետը, Եղեգնաձոր քաղաքի Սևակի 2 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի բնակիչների կողմից տրված գրավոր համաձայնությունը, Արմեն Համբարձումյանի կողմից ներկայացված դիմումը /մուտքի թիվ՝ 75/.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի, Եղեգնաձոր բնակավայրի Պ. Սևակի փողոց 2/25 առևտրի սրահ հասցեում գտնվող, Արմեն Ռադիկի Համբարձումյանի կողմից բազմաբնակարան բնակելի շենքի օտարման գոտում ինքնակամ կառուցված՝ 19.17 քմ ներքին մակերեսով և 23.58 քմ արտաքին մակերեսով շինությունը (առևտրի սրահ, բաց պատշգամբ) համարել օրինական (որակավորում ունեցող անձի կողմից չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023UDPCSM): Կառույցին տալ հետևյալ հասցեն՝ Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր ք., Պ. Սևակի փողոց, 2/25 առևտրի սրահ:

2. Առաջարկել կառույցն իրականացրած Արմեն Ռադիկի Համբարձումյանին (ծնված՝ 01.10.1973թ.) 1քմ շինության օրինականացման համար Եղեգնաձորի համայնքապետարանի 900355101099 հաշվեհամարին վճարել՝ 3938 (երեք հազար ինը հարյուր երեսունութ) ՀՀ դրամ, ընդամենը 92 860 (իննսուներկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 6-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված գործակիցները:

3 . Կառույցը համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինության համալիր ծրագրով նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին անձին տեղեկացնելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 07
ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, +374 281 22020,28125183
yeghegnadzor@gmail.com,yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 մարտի 2024 թվականի N 203-Ա

## ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $5^1$ հոդվածի 1-ին մասով հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշման 1-ին հավելվածի 11-րդ կետը և ԱՁ Արման Գրիգորյանի հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Գ. Նարեկացի փողոցում (նախկին «Արագիլ» կինոթատրոնի հարևանությամբ) սուրճ պատրաստող սարք տեղադրելու և սուրճի բացօթյա վաճառք կազմակերպելու համար ԱՁ Արման Գրիգորյանին տալ թույլտվություն՝ 2024 թվականի համար, ըստ ամիսների, համաձայն վճարումների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2024 թ. մարտի 07
ք. Եղեգնաձոր